ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 22 օգոստոսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի
Ա. Գյուլումյանի

Ուսումնասիրելով Հայկ Մարգարյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Հայկ Մարգարյանը (ներկայացուցիչներ՝ Ա. Ղազարյան, Ա. Կիրակոսյան, Ա. Զեյնալյան) 2016 թվականի օգոստոսի 2-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 10 և 60-րդ, 83-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասն՝ այնքանով, որքանով դատախազներին նշանակված կենսաթոշակի վերահաշվարկման համար հիմք չի հանդիսանում պաշտոնային դրույքաչափերի բարձրանալը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 10 և 60-րդ, 73, 78, 83, 80-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց

սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «հաշվի առնելով հիմնական կենսաթոշակի չափը, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով անձի զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված գործակիցը և մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը» դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից տրված բովանդակությամբ հանդերձ»:

2. Դիմողը նշում է, որ մի շարք օրենքներով, մասնավորապես՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով, «Ոստիկանությունում ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքով, դատախազի կենսաթոշակը հաշվարկվում էր դատախազի պաշտոնային դրույքաչափը փոփոխվելու դեպքում՝ նոր պաշտոնային դրույքաչափի բարձրացմանը համամասնորեն: Մինչդեռ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո սահմանափակվեց պաշտոնաթող դատախազների կենսաթոշակի վերահաշվարկման իրավունքը:

Ըստ դիմողի՝ դատախազի գործունեության անկախության ապահովումը ենթադրում է ոչ միայն նրան պատշաճ վարձատրության տրամադրումը, այլև նրա հետագա սոցիալական երաշխիքների օրենսդրական ձեւակերպումը և կիրառումը, ինչը ոչ միայն արտոնություն է, այլ՝ սոցիալական երաշխիք: Սակայն գործող իրավակարգավորումը նվազեցնում է դատախազի սոցիալական պաշտպանության երաշխիքները:

Դիմողը գտնում է, որ նոր իրավակարգավորման պայմաններում օրենսդրական նշված սահմանափակումը համաչափ չէ հետապնդվող նպատակին, չի ապահովում անձի սոցիալական իրավունքները, ավելին, ունենալով հետադարձ ուժ սոցիալական ապահովության ոլորտում՝ հետընթաց է գրանցում՝ վերացնելով արդեն իսկ ձևավորված և իրավակարգավորում ստացած, անձի հիմնարար իրավունքների իրացման գործիք հանդիսացող, անձի կենսաթոշակային իրավունքները երաշխավորող ինստիտուտի գոյությունը, ինչը հակասում է սոցիալական պետության սկզբունքներին:

3. Ելնելով դիմումի ուսումնասիրության արդյունքներից՝ դատական կազմը գտնում է, որ առկա չեն դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,

- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ, 31-րդ և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Հայկ Մարգարյանի դիմումի հիման վրա՝ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 9-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

22 օգոստոսի 2016 թվականի
ՍԴԴԿՈ-3